

երկրորդ մասում դրած են Հերեթիկներ և վերջը մի բառարան ու յաւելուած:

Այս ժողովածուի մասին էլ մենք նոյնը պիտի ասենք, ինչ որ միանգամ արդէն ասել ենք նրա «Սասմայ ծռերի» մասին, որ ոչ մի կերպ չի նկատուում թէ ժողովողը առաջնորդուել է մի յայտնի ծրագրով. օրինակ միանգամ նա անծանօթ ժողովրդական բառերի բացատրութիւնը բնագրի ներքեւումն է դնում, նոյն գրքի մի ուրիշ մասի համար առանձին բառարան է կազմում ապա բաւականացել է միայն մի երկու երգի համար ծանօթութիւններ դնել, մինչդեռ շատ ցանկալի է, որ նա այդ արած լինէր իւրաքանչիւրի համար:

Ապա յատուկ շնորհակալութեամբ տուացուել են նաև հետևեալ գրքերը:

Ա. Ղ. ՕԹ. Ք. Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

«Որ օրհնես զայնոսիկ» ի յիսուն լեզուս սեպհական տառիւք իւրաքանչիւր լեզուի. Բ. տպագրութիւն, ջանիւ և ինամուլ Հ. Գ. Վ. Գալէմքարեանի: Վիեննա 1893:

Այս գիրքը իւր փառահեղ տպագրութեամբ դարձեալ մի փայլուն ապացոյց է, թէ ինչպէս Վիեննայի միաբանները ամեն ջանք գործ են դնում դարուս յառաջընթաց քայլերից յետ չի մնալ և գիտեն տպագրական արհեստը — գեղարուեստի աստիճանի հասցնել: Գիրքը հրատարակուած է Հռոմի Պապին իբրև ընծայ ներկայացնելու նրա յիսնամեայ եպիսկոպոսութեան տօնախմբութեան առթիւ և ինչպէս արդէն վերնագիրը ցոյց է տալիս, պարունակում է իւր մէջ մեր պատարագամատոյցի յայտնի աղօթքը 50 լեզուներով թարգմանուած՝ այդ լեզուները իմացող հռչակաւոր մասնագէտների կողմից և տպագրուած են այն տառերով, ինչ տառեր գործադրւում են այդ լեզուների համար. ուստի իրաւացի է, որ նա կարող է նաև սրահնելու, ընդունելութեան սենեկաց, ժողովարանաց և ամեն մատենագարանաց կարևոր ու յարմար զարգե-

ըէն մին ըլլալ: Եւ քանի որ իւրաքանչիւր անհատի յատուկ է հետաքրքրուել ուրիշ ազգերի լեզուով, գրութեամբ և ահա մեր առաջն է դրած մի հանրածանօթ նիւթի բազմալեզուեան թարգմանութիւնը ընդիր հրատարակութեամբ, որը կարող է շատ շատերի այդ բնական հետաքրքրութեանը յակուրդ տալ: Նոյնպիսի մի գիրք էլ հրատարակել են Վենետիկեան Մխիթարեանները թարգմանելով Ներոէս Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» ի առաջի տունը, որի օրինակները առիթ եմ ունեցել տեսնելու երկու սրօփեսորներին մօտ, որոնք այցելելով ս. Ղազարու վանքը իբրեւ յիշատակ գնել էին:

ԴԱՍԱԳԻՐԻՔ ԿՐՕՆԻ ՈՒՂԵՑՈՅՑ ՀԱՅ ԿՐՕՆՈՒՍՈՅՑԻ ՀԱՄԱՐ.
ՆՈՐ ՈՒԽՑԻ ՆԻՒԹԻ մշակութիւնը, Հատոր Բ. մասն Ա. Տետր Ա.
ԴԱՍԱԽՕՄԵՑ Ներսիսեան զպրանոցի ստորին դասատ. աշակերտներին ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՑ. Տփլիս 1893.

Այժմ հայր Սահակը յայտնի է մեր մէջ իբրեւ բարեխիղճ, աշխատասէր, գիտութեան ծառայող մի անձ, որ առանց սղմուկ հանելու շարունակ աշխատում է և արդէն հրատարակել է մի շարք կրօնի ուսուցման համար նշանակած ձեռնարկներ, որոնք մեծ ժողովրդականութիւն են ստացել: Թէ ինչքան մեծ քանք է գործ դրել հայր Սահակը իւր գրքերի կազմելու ժամանակ, այդ մենք իմանում ենք նրա «Հին Ուխտի» յառաջաբանից էջ III⁴: Նա խոստովանում է, որ իւր աշխատութիւնը մի կատարեալ գործ չէ, քաւ լիցի, նրա նպատակն է եղել հետաքրքրութիւն շարժել, ուստի ընդգրկել է մի ձև, որ ցանկանում է շատ շատերից ընդունած տեսնել, որովհետեւ փորձով գիտէ, որ այդ լաւն է: Ահա նրա խօսքերը. «Այս ձևը քանի մի տարի է ուսումնաւորութեան առարկայ դարձել ինձ համար և իմ Զեմ-Ք ԲԵՐԱՍ ՏԵՍԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ երեք տարի

1. Ծան. Դասագիրք կրօնի. Հին-Ուխտի նիւթի մշակութիւնը, Հատ. Ա. Տփլիս, 1888.